VEOLIA
Ջուր

**«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերություն**
**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ**

« 16 » ապրիլի 2021թ. ք. Երևան

ԴԻՄՈՂ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԲԱԺԱՆՈՐԴԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ԱՅԴ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՀՐԱՄԱՆ N 23 Լ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» թիվ 378-Ն որոշմամբ սահմանված Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 2-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 3-րդ մասի «թ» կետի պահանջներով՝

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ**

1. Հաստատել Դիմող անձի կողմից այլ բաժանորդի ներքին ցանցին միացում կատարելու կարգը և այդ գործընթացին առնչվող փաստաթղթերի ձևերը՝ համաձայն **Հավելված**-ի:

2. «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետն՝ Ընկերություն՝ իր հոլովաձևերով) Հանրային կապերի բաժնի պետ Մուրադ Սարգսյանին՝

- ապահովել սույն հրամանի և կից հավելվածի հրապարակումը Ընկերության պաշտոնական ինտերնետային կայքէջում:

3. Ընկերության Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության պետ Կարինե Դավթյանին՝

- սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո ապահովել դրա պատշաճ ծանուցումը Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին:

4. Ընկերության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին՝

- իրենց ղեկավարած ստորաբաժանումների աշխատակիցներին ծանոթացնել սույն հրամանին և դրան կից հավելվածին,

- իրենց իրավասության շրջանակներում ապահովել սույն հրամանի և դրան կից հավելվածի կիրառումը:

5. Սույն հրամանի պահանջների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Ընկերության գլխավոր տնօրեն Ս. Շահինյանին:

6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում Ընկերության ներքին հաղորդակցության ցանցով՝ էլեկտրոնային կարգով հրապարակման պահից:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ Ս. ՇԱՀԻՆՅԱՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» 02655115 "VEOLIA DJUR"

Հավելված

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի
« 16 » ապրիլի 2021 թ.
թիվ 23 Լ հրամանի

## ԿԱՐԳ

Դիմող անձի կողմից այլ բաժանորդի ներքին ցանցին միացում կատարելու և այդ գործընթացին առնչվող փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին

**1.** Սույն կարգը (այսուհետև՝ Կարգ) սահմանում է Դիմող անձի կողմից այլ բաժանորդի՝ մինչև 2017 թվականի հունվարի 1-ը կառուցված ներքին ցանցին միացում կատարելու կարգը և այդ գործընթացին առնչվող փաստաթղթերի ձևերը:

***2. Դիմումի ներկայացումը***

1) Դիմող անձը միացման աշխատանքների կատարման նպատակով Ընկերության բաժանորդների սպասարկման գրասենյակում (այսուհետև՝ ԲՍԳ), կամ Ընկերության Առևտրային տնօրինության համապատասխան տեղամասում (այսուհետև՝ ԱՏ տեղամաս՝ իր հոլովաձևերով) ներկայացնում է գրավոր դիմում՝ համաձայն Ձև 1.1-ի կամ Ձև 1.2-ի:

2) Դիմումին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը և տեղեկատվությունը.

***Ֆիզիկական անձի դեպքում՝***

ա. անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ լիազորված անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լիազորագիրը,

բ. տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հաստատող փաստաթղթի պատճենը կամ համայնքի, իսկ Երևան քաղաքում՝ համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ տարածքում (շենքում, շինությունում) բնակության փաստը հավաստող փաստաթուղթ,

գ. Ընկերության բաժանորդի կողմից տրված համաձայնագիրը՝ համաձայն Ձև 3-ի և համաձայնագիր տվող անձի անձնագրի պատճենը:

***Իրավաբանական անձի դեպքում՝***

ա. ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ լիազորված անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լիազորագիրը.

բ. տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող փաստաթղթի պատճենը.

գ. հարկ վճարողի հաշվառման համարը:

դ. Ընկերության Բաժանորդի համաձայնագիրը՝ համաձայն Ձև 3-ի և համաձայնագիր տվող անձի անձնագրի պատճենը:

3) Դիմումը ԲՍԳ կամ ԱՏ տեղամասի աշխատակիցը մուտքագրում է Ընկերության փաստաթղթաշրջանառության ծրագիր (այսուհետև՝ Ծրագիր՝ իր հոլովաձևերով) ) «Տեխնիկական այլ» տիպով և հասցեագրում Ընկերության Կարձակալության պայմանագրի կառավարման տնօրինության Նամակագրության խմբին (այսուհետև՝ ՎՊԿ Նխ՝ իր հոլովաձևերով):

***3. Սխեմայի կազմումը և տրամադրումը դիմող անձին***

1) Այլ բաժանորդի ներքին ցանցին միացում կատարելու սխեման (այսուհետև՝ Սխեմա՝ իր հոլովաձևերով) միացում կատարելու նպատակով առաջադրվող պայմաններ է, որոնք սահմանվում են՝ ելնելով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի թողունակության, հուսալիության, այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը չխախտելու և Դիմող անձի միացման համար անհրաժեշտ աշխատանքները նվազագույն ծախսերով իրականացնելու պայմաններից:
Սխեման տրամադրվում է 2 ամիս ժամկետով: Ժամկետը լրանալուց հետո դիմող անձը պետք է ներկայացնի նոր դիմում:

2)ՎՊԿ Նխ համապատասխան աշխատակիցը ստուգում է դիմումի և կից փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և մեկ

աշխատանքային օրվա ընթացքում այն հասցեագրում Ընկերության Ներդրումների և զարգացման վարչության Արտադրատեխնիկական բաժնի աշխատակցին (այսուհետև՝ ԱՏԲ):

3) Դիմումը ստանալուց հետո 6 աշխատանքային օրվա ընթացքում ԱՏԲ աշխատակիցների կողմից կատարվում են համապատասխան ուսումնասիրություններ և գործողություններ, անհրաժեշտության դեպքում կատարվում են հարցումներ Շահագործման տնօրինությանը (այսուհետև՝ ՇՏ՝ իր հոլովաձևերով), ստացվում և ամփոփվում են տվյալները և դրա արդյունքում.

ա. կազմվում է Սխեմա՝ համաձայն Ձև 4-ի, որը հաստատում է ԱՏԲ պետը և հայտագրով ներկայացնում ՎՊԿ ՆԽ-ին, կամ

բ. մերժվում է Սխեմայի տրամադրումը և համապատասխան հիմնավորմամբ հայտագիր ներկայացվում ՎՊԿ ՆԽ-ին:

Սխեմայի կամ հայտագրի տեսաներածված օրինակը մուտքագրվում է Ծրագիր /կցվում է համապատասխան դիմումին/՝ ԱՏԲ աշխատակցի կողմից:

4) ՎՊԿ ՆԽ աշխատակիցը Սխեման կամ դրա տրամադրումը մերժելու մասին հայտագիրը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում կազմում է համապատասխան գրությունը /Սխեման տրամադրելու գրությունը կազմվում է համաձայն Ձև 5-ի/ և ներկայացնում Վարձակալության պայմանագրի կառավարման տնօրենի և Գլխավոր տնօրենի հաստատմանը:

5) Գրության հաստատումից հետո Ընկերության Ընդհանուր բաժնի աշխատակիցը 1 աշխատանքային օրվա ընթացում այն ելքագրում է, տեսաներածված օրինակը կցում Ծրագրի համապատասխան գործին, իսկ բնօրինակ գրությունն ուղարկում է դիմող անձին՝ փոստային ծառայության միջոցով:

***4. Պայմանագիր կնքելու դիմումի ներկայացումը***

1) Դիմող անձը Սխեման ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում իրականացնում է Սխեմայի «Այլ պահանջներ» բաժնում նախատեսված գործողությունները և ԲՍԳ-ում կամ ԱՏ տեղամասում ներկայացնում է Առևտրային հաշվառքի սարք (այսուհետև՝ ԱՀՍ՝ իր հոլովաձևերով) տեղակայելու և Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու գրավոր դիմում՝ համաձայն Ձև 2.1-ի կամ Ձև 2.2-ի:

2) Դիմումը ԲՍԳ կամ ԱՏ տեղամասի աշխատակիցը մուտքագրում է Ծրագիր «Շահագործման այլ» տիպով և հասցեագրում ՎՊԿ ՆԽ:

3) ՎՊԿ ՆԽ աշխատակիցը դիմումը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում հասցեագրում է Ընկերության համապատասխան Շահագործման տնօրինություն:

4) Ընկերության ՇՏ աշխատակիցները 4 աշխատանքային օրվա ընթացքում.

ա. մերժման հիմքերի բացակայության դեպքում տեղակայում են ԱՀՍ և կազմում ԱՀՍ տեղադրման տեխնիկական ակտը՝ համաձայն Ձև 6-ի: Համապատասխան հաստատումներից հետո ԱՀՍ տեղադրման տեխնիկական ակտի տեսաներածված օրինակը մուտքագրում են Ծրագիր և գործը հասցեագրում Ընկերության Առևտրային վերահսկողության բաժին (այսուհետև՝ ԱՎ բաժին) կամ Ընկերության Առևտրային տնօրինություն (այսուհետև՝ ԱՏ՝ իր հոլովաձևերով): Միացման աշխատանքները կատարվում են դիմող անձի կողմից՝ ԱՀՍ տեղակայելու հետ միաժամանակ:

բ. Մերժման հիմքերի առկայության դեպքում ՇՏ աշխատակիցը կազմում է համապատասխան հիմնավորմամբ հայտագիրը, տեսաներածված օրինակը մուտքագրում է Ծրագիր և գործը հասցեագրում է ՎՊԿ ՆԽ-ին:

5) Այն դեպքում, երբ դիմող անձին տրամադրվել է այլ բաժանորդի ջրամատակարարման ներքին ցանցին միանալու սխեմա, իսկ ջրահեռացման համակարգ կառուցելու համար տրամադրվել է նախագծման տեխնիկական պայման կամ Միացման պայմանագիր կնքելու առաջարկ, ապա ԱՀՍ պետք է տեղադրվի տրամադրված տեխնիկական պայմանի հիման վրա սահմանված կարգով ջրահեռացման համակարգը կառուցելուց հետո:

6) ՇՏ-ից ստացված հայտագրի հիման վրա ՎՊԿ ՆԽ աշխատակիցը 3 աշխատանքային օրվա ընթացքում պատրաստում է համապատասխան գրություն և ներկայացնում Վարձակալության պայմանագրի կառավարման տնօրենի և Գլխավոր տնօրենի հաստատմանը:

7) Գրության հաստատումից հետո Ընկերության Ընդհանուր բաժնի աշխատակիցը 1 աշխատանքային օրվա ընթացում գրությունը ելքագրում է, տեսաներածված օրինակը կցում Ծրագրի համապատասխան գործին, իսկ բնօրինակն ուղարկում է դիմող անձին՝ փոստային ծառայության միջոցով:

**8)** ԱՀՍ տեղադրման տեխնիկական ակտի հիման վրա ԱՏ կամ ԱՎ բաժնի աշխատակիցը 5 աշխատանքային օրվա ընթացքում կնքում է տեղակայված առևտրային հաշվառքի սարքը, Դիմող անձին ներկայացնում է Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ, կազմում է համապատասխան Արձանագրությունը՝ համաձայն Ձև 7.1, Ձև 7.2, Ձև 7.3 կամ Ձև 7.4-ի և անհրաժեշտ փաստաթղթերի հետ փոխանցում է Ընկերության Բաժանորդների տվյալների բազայի կառավարման և ծրագրավորման վարչություն:

***5. Նոր հաշվառման քարտի ձևակերպում***

1) Ընկերության Բաժանորդների տվյալների բազայի կառավարման և ծրագրավորման վարչության աշխատակիցը ԱՏ կամ ԱՎ բաժնից ստացված արձանագրության հիման վրա համապատասխան համարանիշով բացում է նոր հաշվառման քարտ:

2) Ընկերության Բաժանորդների տվյալների բազայի կառավարման և ծրագրավորման վարչության աշխատակիցը հաշվարկային ամիսը փակելուց հետո տվյալ ամսում բացված նոր հաշվառման քարտերի տվյալները /բջջային հեռախոսահամար, անուն, ազգանուն, հասցե, հաշվառման քարտի համար/ ռեեստրով ներկայացնում է Ընկերության Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչություն՝ Դիմող անձին նոր հաշվառման քարտի համարը կարճ հաղորդագրությամբ /sms/ տեղեկացնելու համար:

Կարգ


Այլ բաժանորդի ներքին ցանցից միացում /բաժանորդի ներքին ցանցը կառուցվել է մինչև 2017թ./
2. Դիմումի ներկայացումը
3.Սխեմայի կազմումը, տրամադրումը
4.Պայմանագիր կնքելու դիմումի ներկ.
5.Նոր հաշվ. քարտի ձևակերպումը
Դիմող անձ
Դիմումի և փաստաթղթերի ներկայացում
Դիմումի ընդունում, մուտքագրում ծրագիր
ծրագրով
Փաստաթղթերի ստուգում, դիմումի հաշվառում, հասցեագրում ԱՏՖ
ծրագրով
Ներքին ցանցից միացման սխեմայի կազմում
Սխեմայի ներկայացում դիմողին
Մերժման գրություն դիմողին
Ոչ, հայտագիր
Այո բնօրինակ
Սխեման կազմելու համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում:
Սխեմայի պահանջների կատարում, ԱՀՍ տեղակայելու, Պայմանագիր կնքելու դիմումի ներկայացում
Դիմումի ընդունում, մուտքագրում ծրագիր
ծրագրով
Դիմումի հաշվառում, հասցեագրում ԾՏ
Մերժման գրություն դիմողին
Ոչ, հայտագիր
ծրագրով
ԱՀՍ տեղակայում
Այո, տեխ.ակտ
ԱՀՍ կնքում, Պայմանագրի կնքում
արձանագրություն
նոր բաժանորդային քարտի ձևակերպում
ռեեստր
Դիմող անձին հաշվառման համարի ուղարկում կարճ հաղորդագրությամբ /sms/

Ձև 1.1

VEOLIA Ջուր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
գլխավոր տնօրեն Մ. Շահինյանին

............................................................
/դիմողի անունը, ազգանունը/

............................................................
/փոստային առաքման հասցեն/

............................................................
/հեռախոսահամար/

# ԴԻՄՈՒՄ

Այլ բաժանորդի ներքին ցանցին միանալու
(ֆիզիկական անձանց համար)

Խնդրում եմ թույլ տալ ______________________ հասցեի ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ծառայությունների մատուցումն իրականացնել ______________________ ______________________ հասցեի ______________ հ/բ բաժանորդի ներքին ցանցով:

Կից ներկայացնում եմ.

- ☐ անձը հաստատող փաստաթղթի պատճենը /լիազորված անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լիազորագիրը/
- ☐ տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հաստատող փաստաթղթի պատճենը կամ համայնքի, իսկ Երևան քաղաքում՝ համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ տարածքում (շենքում, շինությունում) բնակության փաստը հավաստող փաստաթուղթ
- ☐ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդ հանդիսացող անձի կողմից տրված համաձայնագիրը և անձնագրի պատճենը:

Դիմող ______________ ______________________ ____ ______________ 20 թ.
(ստորագրություն) (անուն, ազգանուն) (օր, ամիս, տարի)

Դիմումն ընդունեց ______________________ ԲՍԳ____/օպերատոր _____ Գործի համար ________
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Ձև 1.2

VEOLIA Ջուր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
գլխավոր տնօրեն Մ. Շահինյանին

.............................................................................
/դիմողի անունը, ազգանունը/

.............................................................................
/փոստային առաքման հասցեն/

.............................................................................
/հեռախոսահամար/

**ԴԻՄՈՒՄ**

Այլ բաժանորդի ներքին ցանցին միանալու
(Իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ համար)

Խնդրում եմ թույլ տալ ______________________________ հասցեի ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ծառայությունների մատուցումն իրականացնել ______________________________ ______________________________ հասցեի ______________ հ/ք բաժանորդի ներքին ցանցով:

Կից ներկայացնում եմ.

- ☐ անձը հաստատող փաստաթղթի պատճենը /լիազորված անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լիազորագիրը/
- ☐ տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հաստատող փաստաթղթի պատճենները
- ☐ պետռեգիստրի վկայականի պատճենը
- ☐ հարկ վճարողի հաշվառման համարի պատճենը
- ☐ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդ հանդիսացող անձի կողմից տրված համաձայնագիրը և անձնագրի պատճենը:

Դիմող ______________ ______________________ ____ ______________ 20 թ.
(ստորագրություն) (անուն, ազգանուն) (օր, ամիս, տարի)

Դիմումն ընդունեց ______________________ ԲՍԳ____/օպերատոր _____ Գործի համար ________
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Ձև 2.1

VEOLIA Ջուր

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
գլխավոր տնօրեն Մ. Շահինյանին

.............................................................................
/դիմողի անունը, ազգանունը/

.............................................................................
/փոստային առաքման հասցեն/

.............................................................................
/հեռախոսահամար/

**ԴԻՄՈՒՄ**
առնտրային հաշվառքի սարքի տեղակայման և
ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման
(ֆիզիկական անձանց համար)

Տեղեկացնում եմ, որ համաձայն ներքին ցանցին միացման ________________ սխեմայի կատարել եմ շինարարական աշխատանքները։ Խնդրում եմ տեղակայել առնտրային հաշվառքի սարք և կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր։

**Պատրաստ եմ ապահովել իմ կամ իմ կողմից տրված լիազորագրի հիման վրա լիազորված անձի ներկայությունը՝ առնտրային հաշվառքի սարքի տեղակայման աշխատանքներ իրականացնելու ժամանակ:**

Դիմող ________________ ______________________________ _____ ______________ 20 թ.
(ստորագրություն) (անուն, ազգանուն) (օր, ամիս, տարի)

Դիմումն ընդունեց ______________________________ ԲՍԳ____/օպերատոր _____ Գործի համար ______
(անուն, ազգանուն, ստորագրություն)

Ձև 2.2

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ
գլխավոր տնօրեն Մ. Շահինյանին

..............................................................................
/դիմողի անունը, ազգանունը/

..............................................................................
/փոստային առաքման հասցեն/

..............................................................................
/հեռախոսահամար/

**ԴԻՄՈՒՄ**

առնտրային հաշվառքի սարքի տեղակայման և
ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման
(Իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության
կամ անհատ ձեռնարկատիրոջ համար)

Տեղեկացնում եմ, որ համաձայն ներքին ցանցին միացման ________________ սխեմայի կատարել եմ շինարարական աշխատանքները: Խնդրում եմ տեղակայել առնտրային հաշվառքի սարք և կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր:

**Պատրաստ եմ ապահովել իմ կամ իմ կողմից տրված լիազորագրի հիման վրա լիազորված անձի ներկայությունը՝ առնտրային հաշվառքի սարքի տեղակայման աշխատանքներ իրականացնելու ժամանակ:**

Դիմող ________________ ______________________________ ____ ______________ 20 թ.
(ստորագրություն) (անուն, ազգանուն) (օր, ամիս, տարի)

Դիմումն ընդունեց ____________________________ ԲՍԳ____/օպերատոր _____ Գործի համար ________
(անուն, ազգանուն, ստորագրություն)

**ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ**

ներքին ցանցին միանալու

ք. ____________________ «___»________20 թ

Ես ________________________________________/Ա. Ա.Հ./, անձնագիր ___________, տրված «______» ____________ թ ____________ կողմից, հասցե՝ ________________________________ ________________________________________________, հանդիսանալով «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության բաժանորդ ______________ /հ/ք/, տալիս եմ իմ համաձայնությունն առ այն, որ ________________________________________________________________________________ հասցեի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունները մատուցվեն վերը նշված հաշվառման քարտի ներքին ցանցով՝ այդ թվում առնտրային հաշվառքի սարքից հետո կատարվող միացմամբ:

---------------------------------------------------------------

/անուն ազգանուն, ստորագրություն/

---------------------------------------------

/հեռախոսահամար/

VEOLIA

«Հաստատում եմ»

Արտադրատեխնիկական բաժնի պետ՝

__________________ անուն, ազգանուն

/ստորագրություն/

«_______» ____________________ 202 թ.

## N ____________ բաժանորդային քարտի ներքին ցանցին ջրամիացման և/կամ ջրահեռացման սխեմա ՎՋ/Ս-

/ջրամիացման և/կամ ջրահեռացման կետի/

| ____________________ | ________________ | ______________ |
|---|---|---|
| /տարածքի հասցե/ | /անուն, ազգանուն/ | /հեռախոսահամար/ |




| | |
|---|---|
| Ներքին ցանցում գործող խողովակի տրամագիծը, ճնշումը, տեսակը/նյութը/ | d= ___ մմ, P= ___ մթն, ___ |
| Ջրամիացման կետ | ________________ հասցեի ջրամատակարարման ներքին ցանցին |
| Կոյուղագծի միացման կետ | ________________ հասցեի ջրահեռացման ներքին ցանցին |
| Միացման տրամագիծը<br>Ջրաչափի տրամագիծը, դասը և տիպը | d= ___ մմ<br>d= ___ մմ, «Վեոլիա Ջուր» ՓԲԸ լաբորատորիայում ստուգաչափված, B կամ բարձր դասի |
| Այլ պահանջներ | 1. Ջրաչափական հանգույցի տեղադրման կետում կառուցել դիտահոր:<br>2. Ջրաչափը կտրամադրվի և կտեղադրվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից:<br>3. Միացման աշխատանքներն իրականացնել ջրաչափական սարքն ընկերության կողմից տեղադրելու հետ միաժամանակ:<br>4. Ըստ բաժանորդի կողմից տրամադրված համաձայնագրի:<br>5. Աշխատանքները կատարել 2 ամսվա ընթացքում: |
| Ջրամատակարարման գրաֆիկ | |

**Ծանուցում -** «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն պատասխանատվություն չի կրում բաժանորդների ներքին ցանցում առաջացած վթարների և/կամ ջրաքանակի անբավարարության համար:

«_________» ՇՏ տեղամասի պետ՝ ________________ անուն, ազգանուն
/ստորագրություն/

Ինժեներական խմբի պատասխանատու՝ ________________ անուն, ազգանուն
/ստորագրություն/

VEOLIA

Կատարող՝ ________________ անուն, ազգանուն
/ստորագրություն/

Ձև 5

Անուն, ազգանուն
/հասցեն՝ _______________ /

Առարկան՝ Պարզաբանում գրության վերաբերյալ

Հարգելի պարոն/տիկին __________________________,

Ի պատասխան Ձեր դիմումի՝ ներկայացվում է _______ հասցեի համար կազմված թիվ ՎՋ/Ս____սխեման:

Տեղեկացնում եմ, որ անհրաժեշտ է նշված սխեմայի համաձայն աշխատանքները կատարելուց հետո դիմել «Վեոլիա Ջուր» ՓԲԸ՝ առևտրային հաշվառքի սարք տեղակայելու և Ձեզ Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու համար:

Տեղեկացնում եմ, որ միացման աշխատանքները պետք է կատարվեն միայն ընկերության կողմից առևտրային հաշվառքի սարք տեղակայելու ժամանակ, հակառակ դեպքում միացումը կհամարվի ապօրինի սպառում և հարցին ընթացք կտրվի ՀՀ կառավարության 01.06.2017թ. թիվ 658-Ն որոշմամբ սահմանված կարգով:

*Առդիր՝ _ թերթ:*

Հարգանքով՝ Գլխավոր տնօրեն

Պատասխանատու՝

Ձև 6

Հաստատում եմ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ

« » ՇՏ տնօրեն

________________

«____» ________________ 202 թ.

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ « » տեղամասի կողմից ____________ բաժանորդային ներքին ցանցի ջրամիացման վրա առևտրային հաշվառքի սարքի տեղադրման

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱԿՏ N

Մենք՝ ներքոստորագրյալներս՝

« » տեղամասի պետ ________________

« » տեղամասի առաջատար մասնագետ ________________

« » տեղամասի ջրամատակարարման ինժեներ ________________

կազմեցինք սույն տեխնիկական ակտն այն մասին, որ համաձայն տրված ՎՋ/Ս-իրականացվել է առևտրային հաշվառքի սարքի տեղադրում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից շահագործվող համապատասխան համակարգերին՝

| Միացման տեսակ / Նկարագիր | Ջրագիծ | Կոյուղագիծ |
|---|---|---|
| Հասցե | | |
| Միացման տրամագիծ | | |
| Ջրաչափի տրամագիծ | | |
| Ջրաչափի համար | | |
| Ջրաչափական հանգույցի կետ | միացման կետ | |
| Հայտարարված գրաֆիկ | | |

Սույն տեխնիկական ակտը հիմք է հանդիսանում

________________
իրավաբանական կամ ֆիզիկական անձի անվանումը. հասցեն

________________

դիմումի համաձայն ձևակերպել որպես «Վեոլիա Ջուր» ՓԲԸ բաժանորդ:

Տեղամասի պետ ________________ ________________
Ստորագրություն

Առաջատար մասնագետ ________________ ________________
Ստորագրություն անուն. ազգանուն

Ջրամատակարարման ինժեներ ________________ ________________
Ստորագրություն անուն. ազգանուն

« » 202 թ.
միացման ամսաթիվը

Գործի համար ________________

Ձև 7.1

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ______ «_____» __________20__ թ.**

**Անհատական բնակելի տան նոր ֆիզիկական բաժանորդի փաստաթղթային տվյալների գրանցում**

Գործի համար ____________ Ջրաչափի օրինականացման դիմումի համար ____________________

- Դիմում
- Անձնագրի պատճենը
- Լիազորագիր
- Դիմող անձի լիազոր ներկայացուցչի անձնագրի պատճենը
- Տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հաստատող փաստաթղթի պատճենը կամ համայնքի, իսկ Երևան քաղաքում՝ համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ տարածքում բնակության փաստը հավաստող փաստաթուղթը
- Ջրամիացման և/կամ ջրահեռացման տեխնիկական պայմանի պատճենը
- Ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ցանցերին միանալու տեխնիկական ակտի պատճենը
- Սխեմա /Այլ բաժանորդի ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ներքին ցանցին միանալու, Միացման, Առանձնացման/
- ԱՀՍ տեղակայման տեխնիկական ակտի պատճենը
- Այլ փաստաթղթեր ______________________________________

Բաժանորդի անուն, ազգանունը ______________________________________

Բաժանորդի հասցեն ______________________________________

Բաժանորդի հեռախոսահամարը ______________, բջջ.____________, էլ.հասցեն____________

Պայմանագրի համարը և ամսաթիվը ______________________________________

| Միացման համարը | Խողովակի տրամագիծ/մմ/ | Առևտրային հաշվառքի սարքի վերջին ցուցմունքը /մ³/ | Ջրամատակարարման տևողություն /ժամ/ | Ծառայության տեսակը | | | Առևտրային հաշվառքի սարքի համարը | Առևտրային հաշվառքի սարքի տիպը | Առևտրային հաշվառքի սարքի ընդունման օրը | Առևտրային հաշվառքի սարքի կնիքի համարը | Առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը | Առևտրային հաշվառքի սարքի վերջին կնիքի համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ջրամատակարարում | Ջրահեռացում | Կեղտաջրերի մաքրում | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |

Սահմանազատման կետում առևտրային հաշվառքի սարքի առկայությունը այո ☐ ոչ ☐

Գրանցել նոր բաժանորդ ______________________________________
/անուն, ազգանուն, հայրանուն/

Բաժանորդային քարտի համարը /____/____/____/______________________

Ենթաբաժանորդ ______________________________________

Տվյալ տարածքը սպասարկող մասնագետ տեսուչ ______________________________
/անուն, ազգանուն, կոդ/

« » տեղամասի պետ անուն, ազգանուն

Օպերատոր անուն, ազգանուն

Ձև 7.2

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ______ «______» ____________20__ թ.

**Նոր իրավաբանական բաժանորդի փաստաթղթային տվյալների գրանցում**

Գործի համար ___________ Ջրաչափի օրինականացման դիմումի համար___________________

- Դիմում
- Տնօրենի անձնագրի պատճենը
- Լիազորագիր
- Լիազոր ներկայացուցչի անձնագրի պատճենը
- Պետական ռեգիստրի վկայականի պատճենը
- Տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող փաստաթղթի պատճենը
- Տարածքի վարձակալման պայմանագրի պատճենը
- Ջրամիացման և/կամ ջրահեռացման տեխնիկական պայմանի պատճենը
- Ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ցանցերին միանալու տեխնիկական ակտի պատճենը
- Սխեմա /Այլ բաժանորդի ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ներքին ցանցին միանալու, Միացման, Առանձնացման/
- ԱՀՍ տեղադրման տեխնիկական ակտի պատճենը
- ԱԱՀ-ից ազատման հիմքը ________________________________
- Այլ փաստաթղթեր ________________________________

Բաժանորդի անվանումը ________________________________

Բաժանորդի հասցեն ______________________ Փոստային ինդեքսը________

Բաժանորդի հեռախոսահամարը __________, ՖԱՔ__________, էլ.հասցեն __________

Պայմանագրի համարը և ամսաթիվը ________________________________

Բաժանորդի գործունեության ոլորտը ________________________________

Ֆինանսավորման աղբյուրը. ՀՎՀՀ | | | | | | | | |

- ☐ Ինքնաֆինանսավորում
- ☐ Պետական բյուջե
- ☐ Համայնքների բյուջե

ԱԱՀ-ից ազատված է / այո/ոչ /____ ______

Բանկի անվանումը __________________ Բանկային հաշվի համարը __________

| Միացման համարը | Խողովակի տրամագիծը/մմ/ | Առևտրային հաշվարկի սարքի տրամաչափը /մմ/ | Ջրամատակարարման տևողությունը /ժամ/ | Ծառայության տեսակը | | | Առևտրային հաշվարկի սարքի տիպը | Առևտրային հաշվարկի սարքի համարը | Առևտրային հաշվարկի սարքի կնիքի համարը | Առևտրային հաշվարկի սարքի ընդունման օրը | Առևտրային հաշվարկի սարքի ցուցմունքը | Առևտրային հաշվարկի սարքի վերջին ստուգման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ջրամատակարարում | Ջրահեռացում | Կեղտաջրերի մաքրում | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |

Սահմանազատման կետում առևտրային հաշվարկի սարքի առկայությունը այո ☐ ոչ ☐

Գրանցել նոր բաժանորդ ________________________________

/անվանում/

Բաժանորդային քարտի համարը /____/____/____/________________

Ենթաբաժանորդ ________________________________

Տվյալ տարածքը սպասարկող մասնագետ տեսուչ ________________________________

/անուն, ազգանուն, կոդ/

« » տեղամասի պետ անուն, ազգանուն

Օպերատոր անուն, ազգանուն

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ______ «______» ____________20__ թ.

**Անհատական բնակելի տան նոր ֆիզիկական բաժանորդի փաստաթղթային տվյալների գրանցում**

Գործի համար ___________ Ջրաչափի օրինականացման դիմումի համար _______________

- Դիմում
- Անձնագրի պատճենը
- Լիազորագիր
- Դիմող անձի լիազոր ներկայացուցչի անձնագրի պատճենը
- Տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ծերքբերումը հաստատող փաստաթղթի պատճենը կամ համայնքի, իսկ Երևան քաղաքում՝ համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ տարածքում բնակության փաստը հավաստող փաստաթուղթը
- Ջրամիացման և/կամ ջրահեռացման տեխնիկական պայմանի պատճենը
- Ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ցանցերին միանալու տեխնիկական ակտի պատճենը
- Սխեմա /Այլ բաժանորդի ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ներքին ցանցին միանալու, Միացման, Առանձնացման/
- ԱՀՍ տեղակայման տեխնիկական ակտի պատճենը
- Այլ փաստաթղթեր _______________________

Բաժանորդի անուն, ազգանունը _______________________

Բաժանորդի հասցեն _______________________

Բաժանորդի հեռախոսահամարը _____________, բջ.__________, էլ.հասցեն__________

Պայմանագրի համարը և ամսաթիվը _______________________

| Միացման համարը | Խողովակի տրամագիծը /մմ/ | Առևտրային հաշվարկի սարքի վերջին տրամագիծը /մմ/ | Ջրամատակարարման տևողություն /ժամ/ | Ծառայության տեսակը | | | Առևտրային հաշվարկի սարքի համարը | Առևտրային հաշվարկի սարքի տիպը | Առևտրային հաշվարկի սարքի ընդունման օրը | Առևտրային հաշվարկի սարքի կնիքի համարը | Առևտրային հաշվարկի սարքի ցուցմունքը | Առևտրային հաշվարկի սարքի կնքման ամսաթիվը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ջրամատակարար | Ջրահեռացում | Կեղտաջրերի պոմպում | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |

Սահմանազատման կետում առևտրային հաշվարկի սարքի առկայությունը այո ☐ ոչ ☐

Գրանցել նոր բաժանորդ _______________________

/անուն, ազգանուն, հայրանուն/

Բաժանորդային քարտի համարը /___/___/___/_______________

Ենթաբաժանորդ _______________________

Տվյալ տարածքը սպասարկող մասնագետ տեսուչ _______________________

/անուն, ազգանուն, կոդ/

ԳՏ ԱԿ բաժնի պետ — անուն, ազգանուն

ԳՏ ԱԿ բաժնի պետի տեղակալ — անուն, ազգանուն

ԳՏ ԱԿ բաժնի մասնագետ — անուն, ազգանուն

Ձև 7.4

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ______ «______» ____________20__ թ.

**Նոր իրավաբանական բաժանորդի փաստաթղթային տվյալների գրանցում**

Գործի համար ____________ Ջրաչափի օրինականացման դիմումի համար ____________

- Դիմում
- Տնօրենի անձնագրի պատճենը
- Լիազորագիր
- Լիազոր ներկայացուցչի անձնագրի պատճենը
- Պետական ռեգիստրի վկայականի պատճենը
- Տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները կամ իրավունքների ծառքբերումը հավաստող փաստաթղթի պատճենը
- Տարածքի վարձակալման պայմանագրի պատճենը
- Ջրամիացման և/կամ ջրահեռացման տեխնիկական պայմանի պատճենը
- Ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ցանցերին միանալու տեխնիկական ակտի պատճենը
- Սխեմա /Այլ բաժանորդի ջրամատակարարման և/կամ ջրահեռացման ներքին ցանցին միանալու, Միացման, Առանձնացման/
- ԱՀՍ տեղակայման տեխնիկական ակտի պատճենը
- ԱԱՀ-ից ազատման հիմքը ____________
- Այլ փաստաթղթեր ____________

Բաժանորդի անվանումը ____________

Բաժանորդի հասցեն ____________ Փոստային ինդեքսը ____________

Բաժանորդի հեռախոսահամարը ____________, ֆաքս ____________, էլ.հասցեն ____________

Պայմանագրի համարը և ամսաթիվը ____________

Բաժանորդի գործունեության ոլորտը ____________

Ֆինանսավորման աղբյուրը. ՀՎՀՀ [ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ][ ]

- ☐ Ինքնաֆինանսավորում
- ☐ Պետական բյուջե
- ☐ Համայնքների բյուջե

ԱԱՀ-ից ազատված է / այո/ոչ /____________

Բանկի անվանումը ____________ Բանկային հաշվի համարը ____________

| Միացման համարը | Խողովակի տրամագիծ/մմ/ | Առևտրային հաշվարկի սարքի տրամագիծ /մմ/ | Ջրամատակարարման տևողություն /ժամ/ | Ծառայության տեսակը: Ջրամատակարար | Ծառայության տեսակը: Ջրահեռացում | Ծառայության տեսակը: Կեղտաջրերի մաքրում | Առևտրային հաշվարկի սարքի տիպը | Առևտրային հաշվարկի սարքի համարը | Առևտրային հաշվարկի սարքի կնիքի համարը | Առևտրային հաշվարկի սարքի ընդունման օրը | Առևտրային հաշվարկի սարքի ցուցմունքը | Առևտրային հաշվարկի սարքի կնիքի վիճակը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | |

Սահմանազատման կետում առևտրային հաշվարկի սարքի առկայությունը այո ☐ ոչ ☐

Գրանցել նոր բաժանորդ ____________

/անվանում/

Բաժանորդային քարտի համարը /___/___/___/___/____________

Ենթաբաժանույթ ____________

Տվյալ տարածքը սպասարկող մասնագետ տեսուչ ____________

/անուն, ազգանուն, կոդ/

ԳՏ ԱՎ բաժնի պետ անուն, ազգանուն

ԳՏ ԱՎ բաժնի պետի տեղակալ անուն, ազգանուն

ԳՏ ԱՎ բաժնի մասնագետ անուն, ազգանուն